



ԲԱԶՄԱՎԷՊ

ԺԹ ՏԱՐԻ, ԹԻԻ 1

1861

ՅՈՒՆՈՒԱՐ 1

ԴՊՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Ի ՅԻՇԱՏԱԿԻ ԴԱՐԱԴԱՐՁԻ ԾՆՆԴԵԱՆ

ՍԱՄՈՒԵԼԻ ՄՈՒՐԱՏԱՅ

ԵՒ Ի ՔՍԱՆԵՐՈՐԴԻ ՎԵՅԵՐՈՐԴԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԴԻՍԻ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՆՈՐԱ

Անցեալ տարի համանման օր մը պատիւ ունեցայ Հայ ազգին հնագոյն և փառաւորագոյն հանդիսի մը յիշատակը հռչակել, այսինքն իւր Հայկ նախահօր տօնը. այսօր պիտի հռչակեմ այս վարժարանիս ամենէն սիրելի յիշատակը, այսինքն իրեն հիմնադրին մեծին ՍԱՄՈՒԵԼԻ ՄՈՒՐԱՏԱՅ ծննդեան հարիւրամեակը : Եւ յիշատակս կը յիշեցնէ ինծի ուրիշ մը, որ դեռ կը հնչէ բոլոր գիտնական աշխարհի մէջ, մանաւանդ Վաղղիոյ մօտակայ մեծ երկրի մը մէջ. այս է՝ հարիւրամեակն ծննդեան Շիլլերայ, գերմանացոց մեծագոյն բանաստեղծին :

Ո՛հ, ինչո՞ւ Հայաստան ալ չունի Վերմանիոյ բազմն մեծահռչակ հանդիսիւ տօնելու զանունն իր սրբոց մէ-

կուն՝ ժամանակակցին Շիլլերայ, որուն թէպէտ հանձարն չունեցաւ, բայց ունէր հայրենասիրութիւնը, և ազդեցութիւնն ազգային հանձարոյն յառաջագիմութեան վրայ : . . .

Սակայն ո՞վ ենք մենք Հայքս, մնացորդք ազգի և երկրի, մոռացուած այժմեան քաղաքականութեան շահուն առջև, որ կարենանք բաղդատուիլ այն ընդարձակ Վերմանիոյ հետ . . . Բայց միթէ Հայաստան ալ ատեն մը լայնածաւալ աշխարհք մը չէր, և համեմատելով ընդ Վերմանիոյ՝ աւելի բազմամարդ : Թէպէտ հիմա Հայ ազգն իր առաջին բազմութե տասներորդ մասն մնացեալ, բայց կերպով մը ամէն ժողովրդէ աւելի տարածեալ է երկրիս վրայ, որուն ամենայն անկիւնը յիշա-

տակ մը կամ արձան մը թողուցած է : Իսկ այդ յիշատակարաններն յաւիտեան լուռ պիտի մնան . պիտի չկարենան այս պիտի նշանաւոր օրեր արթնցնել քանի մը թմրեալ արձագանգներ : Եւ ո՞վ է կենդանացնողն այդ հայրենասիրական արձագանգները , որք նշանաւոր օր մը բոլոր ազգ մը , ընդարձակ աշխարհք մը ցնծալից ուրախութեամբ 'ի թունդ կը հանեն : Եթէ բազմութիւն ըլլաւն , թէ զօրութիւնն , թէ հարստութիւնն է այդ ցնցումը տուող : Եւ , ո՞չ . չեն այդպիսի խաղք և հաշիւք բազդին , այլ զգայուն սիրտն , տաք երախտագիտութիւնն , զգացումն գեղեցկին որ զքար և զժայռ անգամ կը դրդեն , և Եմինոնի անշարժ արձանին ալ առաւօտեան արեւուն անուշ ցորացման տակ երգել կու տան : — Եւնչ պիտի ըլլար երկրիս բազդն , եթէ այդ զօրաւոր տէրութիւնն ներն՝ որ իրենց պատերազմական ասաւոր նիւթոց վրայ կը թնած՝ աշխարհքիս ճակատագրին վրայ կը վիճեն , եթէ յանկարծ կորսնցընէին մարդկութեան կարեկցութիւնը : Եւնչ պիտի ըլլայիր արդեօք դու , հիւրընկալդ Վաղղիա , ինչ արդեօք պիտի ըլլայիր հանդերձ քու ամենայն փառօքդ և ասարկու մեծութեամբդ , եթէ պակաս ըլլար քու բարեբարոյ և ջերմ ազնուութիւնդ , որով աւելի սիրելի կ'ըլլաս հեռաւոր ազգաց , քան թէ ասաւոր մերձաւորաց այդ քու յանդուգն եռանդեամբդ և անոր պատրաստ հնարքներովը : Եւրեւելք , որուն սլզտի գաղթական մը կը տեսնես հոս՝ մտադիր քու շնչմանդ , ուրիշ բանի չի փափագիր՝ բայց քու բարոյական և առատամիտ ազդեցութեանդ , այն որ գիտէ օտար ազգաց լոյս և յառաջադիմութիւն ազդել : Եւսու դիտմամբ է՝ որ մենք ալ ուրիշ տեղերէն աւելի հոս կը յուսամք անմահն Եամուելի Եուրատայ մեզի յանձնած գթութեան և դաստիարակութեան գործը զարգացընել :

Երեցէք ուրեմն ինծի , ով Տեալք , որ այսօր այս կէս դաղղիացի և կէս չայազգի ժողովոյն առջև , հռչակեմ

վարժարանիս հիմնադրին յիշատակը : Եակայն իմ բարեսէր ունկնդրացս ներողամտութիւնը չձանձրացընելու համար , համարձակ կ'ըսեմ , որ ոչ կրնամ և ոչ կ'ուզեմ պերձախօս գովասանութեան զարդեր փնտռել , որոնց իրաւապէս արժանի էր Եամուել Եուրատ . այլ բաւական պիտի սեպեմ միայն կարճառօտ մը յետահայեաց պատկեր մը գծագրել հայկական մատենագրութե . որուն յեղափոխութիւնն ազգին քաղաքական և կրօնական յեղափոխութեանց լծակից էին . ասով թերևս աւելի յայտնի ցուցուի Եամուելի Եուրատայ առատամիտ դիտաւորութիւնը՝ ներկայ ժամանակիս հայ համբալկաց դաստիարակութեանը մէջ :

Եւնչ ընդարձակ բարձրաւանդակն , որ ամէն կողմէն յառաջակողման Եսիոյ չորս ծովերուն մէջ կը թափէ Եդեմական գետերը , որք ազգաց երկրիս վրայ սփռուելու առաջին ճամբաներն են , երբեմն չէ թէ միայն մարդկութեան օրորոցն եղաւ , այլ և այն ամենայն բաներու որ մարդկութեան սեպհական օժիտն են , այսինքն իր տնական , քաղաքական և մտաւոր կենաց տարերքն կամ սկզբունքն : Երկրիս հին բաժանման և կամ ժողովրդոց ցրուելուն ժամանակ՝ արդեօք կային որոշ ծանօթութիւնք հիմնական բնագիտական և փիլիսոփայական գիտութեց , կամ թէ կային գրուած յիշատակարանք : Հակաճառութեան ինդիր մ' է այս , զոր չեմ ուզեր քննել , բայց հնութեան և ողջամիտ փիլիսոփայական ամենայն քննութիւնք կ'ապացուցանեն՝ որ այնպիսի յիշատակարանաց ծագումը շատ հին պիտի ըլլայ , և պէտք չէ հրէից , Վաղղէացուց և ուրիշ արեւելեան ժողովրդոց աւանդութիւններն արհամարհել , որոնք դարութեան ծագումը ջրհեղեղէն առաջ կը սեպեն , և կը կարծեն զԵոյ ոչ միայն անգիր այլ և դրաւոր աւանդութեանց պահպան : Երսուի ալ , թէ այս նահապետս՝ զերկիրս և իր ստացուածքը իր երեք որդւոցն ու յաջորդաւ

ցը մէջ բաժնած ժամանակ՝ զրբերը ժառանգութեամբ Սեմական ցեղին թողուց . բայց Յաբեթի եռանդնա- ժիր և պատերազմասէր որդիքն քիչ ա- տենէն այն զրբերը ձեռք ձգեցին , և այս եղաւ պատճառ ընդդիմութեան և պատերազմաց՝ որք մարդկութեան այդ երկու մեծ ճիւղերը մշտնջենապէս բաժ- նեցին :

Այդ կը տարակուսի այսօր թէ մարդ- կանց առաջին բնակութիւնն և իրենց բաժանման տեղն այն վերոյիշեալ բար- ձրաւանդակին վրան եղած ըլլայ , որ յե- տոյ ՀԱՅԱՍՏԱՆ անուանեցաւ : Սէկ- դի թողլով մեր ազգին ծագման , լե- զուին յարաբերութեանց և նախնական յիշատակարանաց խնդիրը , պէտք չէ մոռնանք՝ որ Հայաստան քաղաքակա- նութիւն մ' ունէր և կը մշակէր զա- րուեստս , զբանաստեղծութիւն , զաս- տղաբաշխութիւն և զվաճառականու- թիւն , յառաջ քան զԱզիպտոս , Վաղ- դէաստան , Յունաստան և Հնդկաս- տան : Ըսոնց հետքը կը գտնենք մեր ժամանակագրաց , Ս. Գրոց , զանազան ազգաց աւանդութեանց , Յոյն և ա- րեւելեան հին պատմաց , Թէոփրաս- տեանց և Գիոսկորիտեանց բնական ու բժշկական գրուածոց մէջ :

Վրիստոսէ երկու դար առաջ մեր ազգին պատմութիւնն կը սկսի երթա- լով պարզիլ և Հայ ազգն համաշխար- հական պատմութեան մէջ նշանաւոր դիրք մը կ'առնու , երբ Արշակունեաց ցեղն Հայկազեանց ցեղին կը յաջոր- դէր : Այս ատենս երեք կամ չորս տար- բեր տարբեր , նոյնչափ լեզուք հայերէ- նին հետ յօդեալ կը կազմէին մեր մատե- նագրութիւնը կամ թէ մեր մտաւոր մշակութիւնը : Վախ Պարթևաց լե- զուն , որ անտարակոյս սկիւթ-պահ- լաւիկ լեզու մ' էր՝ շուտով մեր եր- կրին տիրող լեզուին մէջ ընկղմեցաւ . ետքը ասորի լեզուն՝ որ երկայն ժամա- նակէ 'ի վեր ծանօթ էր , և Հայոց հա- բաւային գաւառաց մէջ կը խօսուէր և կը մշակուէր՝ երբ Արշակունիք իրենց աթոռը հաստատեցին Սիջազետաց

Սժբին քաղաքը , երբոր այն երկիրն ալ Հայոց տէրութեան կալուածներէն մէկը կը սեպուէր : Յետոյ (թողլով զգէնտ լեզուն և մինչև հիմա անծա- նօթ մնացած բեւեռաքանդակ գրու- թեանց լեզուն՝ որ Հայաստանի մէջ Ափրատի ափունքներէն մինչև Կոր- դուաց Օաւ գետոյ ափունքը տարա- ծուած էր) , յունարէն լեզուն էր՝ որ մեր նախնեաց ծանօթ էր յառաջ քան զամէն այժմեան ազգերուն , և Մեք- սանդրի յաջորդաց ժամանակը սովորա- կան լեզու դարձաւ մեր երկրին մէջ . այն թագաւորաց մէջ կային նաև Հայ թագաւորներ ալ , որոնց ոմանց յունա- րէն գրով դրամները մինչև մեզի հա- սած են : Ընտարակոյս Հայոց մէջ կար Կովկասային լեզուաց խառնուրդ ալ , ո- րովհետև Հայոց տէրութեան սահման- ները կը հասնէին ինչուան այն պարս- պաձև լեռանց գօտին որ զԱսիա կը բաժ- նէ Ալբոնիոյ :

Հինգ հարիւր տարուան միջոց , այս- չափ զանազան լեզուաց , սովորութեանց և կրօնից խառնուրդը փոփոխեցին մեր ազգին մտաւոր և կրօնական ձևն ալ : Յունաց , Ըսորոց , Պարսից , Պար- թևաց աստուածութեց մէջ , նաև ազ- գայնոց՝ առաջին տեղին ունէր Անահիտ աստուածուհին , որ մեր Հայոց Աթե- նասն կը սեպուէր , և ուրիշ անուանակո- չութեանց հետ՝ կ'ըսուէր Մայր ամն- նայն իմաստոշքեսն : Հայաստան ու- նէր նաև իր Հերմէսն՝ զոր Տիր կ'ա- նուանէր , գիտութեանց , հմայութեանց և մանաւանդ դպրութեանց աստուած . որուն չէ թէ միայն տաճարներ կանգ- նած էր , այլ և իր հին տումարին չորրորդ ամիսն նուիրած :

Աղարշակ Արշակունեաց տէրու- թեան հիմնադիրն՝ կրնայ ըսուիլ հայր մեր մատենագրութեանն ալ . ինքն հրա- մայեց և յանձնեց Աբասայ ասորոյ որ քննէ և փնտռէ Հայ ազգին պատմու- թիւնը . այն պատմութիւնը զոր ասորե- րէն և յունարէն գրեց՝ և Սոլսէս Աու- րօնեցին համառօտած մեզի հասուց : Յունարէնը միշտ ծանօթ մնալով 'ի

Հայս՝ Սաղարչակայ յաջորգներուն ա-
տեն ալ աւելի ծաղկեցաւ : Ըրչակ Սա-
ղարչակայ որդին , իւր իշխանութիւնը
տարածեց ինչուան Պոնտոս և մօտա-
կայ երկիրները . իսկ թոռն Ըրտաշէս՝
մեծն Սիհրգատայ հետ ինչուան Ըտ-
տիկէի մէջ արշաւեց , և դարձաւ մեծ
ու հարուստ աւարով՝ որուն գլխաւոր
մասն էր յունական կուռքերն և քուր-
մեր և բոլոր կրօնից վերաբերեալ բա-
ներն : Տիգրան՝ Ըրտաշէսի որդին ,
մանկութեան ժամանակէն յունական
ճաշակի և արուեստից հմտացեալ՝ ալ
աւելի մշակեց զայն . իւր դրամներն յու-
նարէն գրերով կը կտրէր և յունական
թատրոններ շինեց իր Տիգրանակերտ
մայրաքաղաքին մէջ , ուր որ Յունաց
տասուերկու քաղաքներէն գաղթական
ներ բերած էր : Եգիպտոսի Սղէոպա-
տրայ թագուհիէն խնդրեց և ընդունե-
ցաւ այն յունարէն ձեռագրաց օրինակ-
ներն որք ազգային պատմութեան կը
վերաբերէին : Իր պալատին մէջ գի-
տուն յոյներ կը պահէր , որոնցմէ մէկն
ալ մանրամասնաբար իր Սեկենասին
պատմութիւնը և գովասանքը գրեց ,
անոր կենդանութեան ատեն : Սերջա-
պէս իւր որդւոյն Ըրտաւազդայ Ա
տուաւ յոյն ուսուցիչներ , որք թելա-
դրեցին իրեն Սոփոկլէսի և Եւրիպի-
դէայ ճաշակը և նմանութիւնը : Պու-
տարքոս և Ըպպիանոս գովասանօք կը
յիշէն Հայոց թագաւորին ճառերը ,
պատմութիւնները և յունական ողբեր-
գութիւնները , զոր և կարգալու բաղզն
ունեցեր էին իրենք :

Փրկչական թուականին առաջին դա-
րուն՝ Հայաստան Հռովմէական իշխա-
նութեան տակն ընկնալով , կերպով մը
իր կորուսած ազատութիւնը փոխարի-
նեց նոր լեզուաւ մը և նոր տեղեկու-
թեամբք . ուրիշ գիտութեանց հետ
Յուլեան տումարն ալ ընդունելով՝ իր
հին տումարին հետ յարմարցուց : Ինքն
Հայաստան ալ իր կողմանէ Հռովմայ
քանի մը օգուտներ բերաւ , բաց ՚ի իր
հանքերէն և համեղ պտուղներէն (ու-
րոնցմէ մէկը դեռ իւր երկրին անունը

կը կրէ լատին լեզուին մէջ , (Prunus ar-
meniaca, Նիւրան .) տուաւ նաև ձիա-
դարմանութեան վրայ նոր ծանօթու-
թիւններ , ինչպէս որ Հռովմայեցի շի-
նական արուեստի վրայ գրող մատենա-
գիրք կը վկայեն : Վարժուի ալ թէ
Հռովմայ առաջին գրագէտն , Սիկերոնի
բարեկամն , Տիւրանիոս գերեալն ՚ի
Լուկուլլոսէ , էր Տիրան մը , անուն
չատ սովորական Հայոց մէջ :

Հայոց այս օտար լեզուներու տուած
նախապատուութեան պատճառն էր ի-
րենց հին գրերուն պակասութիւնն . ին-
չուան անոր նորոգուին , որ հինգե-
րորդ դարուն մէջ եղաւ . հասարակաց
գործածածն էր ասորերէնն , յունարէնն
և պարսկերէնն : Սակայն երկրորդ դա-
րուն սկիզբէն ալ , Բ Ըրտաշէս թա-
գաւորին խաղաղասէր իշխանութեան
ժամանակը , ազգային ոգին մեր մատե-
նագրութեան մէջ առաջին տեղին բըռ-
նեց . բանաստեղծութիւնն երկրորդ
անգամ իր աշխոյժն և թռիչքը թագա-
ւորական գահէն կ'առնուր : Թագա-
ւորին որդւոց մէկն , արքունի հազարա-
պետն Սրոյր , նշանաւոր բանաստեղծ
մ' էր , և թերևս հայկական վիպասա-
նութեան շարագրողաց գլխաւորներէն
մէկն , որ երգեց Ըրտաշէսի երջանիկ
օրերն և անոր Այրարաջ անուանեալ
Սմբատ սպարապետին քաջութիւննե-
րը . հիմա այդ եռանդնաբան վիպասա-
նութեանց քանի մը հատուկտիրքը
մնացած են :

Սինչեռ Ըրտաշէսի յաջորգները
կը շարունակէին Հայաստանի մէջ ի-
րենց պաշտպանութիւնը այսպիսի աշ-
խատութեանց , ՚ի Պարսկաստան Սա-
սանեանց ցեղն կը նորոգէր հին օրէնք-
ներն և մոգական աղանդը : Ըյս
հարստութիւնս անհաշտ թշնամի Ըր-
չակունեաց՝ զոր Պարսկաստանէն բնա-
ջինջ բրաւ , և առ ժամանակ մի Հայաս-
տանէն ալ վճռեց , կը փճացնէր ա-
մէն յունական և հայկական յիշատակ՝
մոցընելով զբազաշտական օրէնքներն
և աղանդը , մինչև որ մեծն Տրգատ
յետ քառասուն տարուան աքսորանաց ,

վտանգաց և կռուոց, նորէն հաստա-
տեց իւր ազգին ամենայն իրաւունքնե-
րը, որուն վրայ բարեբաղդաբար 40
տարի ալ թագաւորեց, և այն աստի-
ճանի ազգը յառաջացուց և լուսաւորեց,
որուն ինչուան այն ատենը չէր հասած
և զոր անկէ ետև միշտ պահեց :

Տրդատ եթէ առաջին Վրիստոնեայ
թագաւորը չեղաւ, սակայն առաջին
մեծ քրիստոնեայ թագաւորն է, որ գոր-
ծակից եղաւ և յաջողեցաւ իւր ամ-
բողջ ազգը ուրիշներէն առաջ Վրիստո-
նէութեան դարձնելու :

Ըստ կրօնքս որ ամէն տեղ, և մա-
նաւանդ ՚ի Հայաստան բարեբարու-
թեան և ուսմանց յառաջանալուն պատ-
ճառ եղաւ, իր ծագման սկիզբէն Հայա-
ստանի մէջ ընդունելի եղաւ . իր թա-
գաւորն Մբգար, որ Լոգեսիոյ մէջ Ըստ-
րոց վրայ ալ կը թագաւորէր, Վրիս-
տոսի տեառն մերոյ Ըստուածութիւնը
դաւանեցաւ, նոյն իսկ Սարդացելոյն
Ըստուծոյ երկրիս վրայ եղած ժամա-
նակ : Իր համբարձմանէն ետքը թա-
ղէոս առաքեալն ՚ի Հայաստան եկաւ
և զՄբգար ընտանեօքն և բազմութիւն
Լոգեսացւոց մկրտեց : Ըստ ճշմարիտ
կրօնքը հաստատելու համար ուրիշ հը-
նարքներէ զատ՝ Մբգար Ս. Գիւրքն ալ
ասորերէն թարգմանել տուաւ : Թա-
ղէոս քարոզեց զՄետարանն ՚ի Սեծ
Հայս, որ Վրիստոսի ուրիշ առաքելոց
ալ քարոզութիւնը լսելու բաղձն ունե-
ցաւ : Բայց սակայն որչափ ալ Վրիս-
տոնէութիւնն առաջին դարուց մէջ իւր
պարկեշտ քօղը բոլոր Հայաստանի վրայ
կը սփռէր, Հայաստան այն ատեն բո-
լորովին ուրիշ տեսութեամբ զմայլեալ
յղփացեալ իր յաղթութեամբքն և հրա-
պուրիչ բանաստեղծութեամբք, որք իր
դիւցազանցը փառքը աւելի կը փայլե-
ցնէին, ականջ չէր դնէր վարդապետու-
թեան մը որ իր աշխոյժ երևակայու-
թիւնը չէր զուարճացնէր :

Առապաշտական օգին Վրիստոնէու-
թեան հետ կը կռուէր . նոյն իսկ Մբ-
գարու որդին՝ թշուառն Բնանէ, կռոց
տաճարները նորէն բացաւ . Սանատրուկ

Մբգարու քեռորդին, որ առջի բերան
գոնէ առ երեսս Վրիստոնէութիւնը
դաւանեցաւ, յետոյ իւր աղջիկը, քոյրը
և զԹաղէոս ու Բարթոլոմէոս առա-
քեալները նահատակեց : Ըրտաշէս,
թէպէտև հօրմէն աւելի կակուղ, իւր
զբաղմունքը և պատերազմները պատ-
ճառելով՝ չուզեց ընդունիլ Վրիստո-
սի կրօնքը, առ որ կը յորդորէին զինքը
իւր կնիկանը ազգական Ըլանաց իշ-
խանքն : Ըյսպէս աւետարանն թագա-
ւորաց և Ըյրարատայ երջանկաց դու-
որ ձգելով առ ժամանակ մը՝ ապակա-
նեալ արքունիքէն հեռու գաւառաց
մէջ կ'ապաստանէր, որպէս զի վերջէն
աւելի փառաւոր յաղթանակով ներս
մտնէ, մինչդեռ Վրիստոնէից դէմ ե-
ղած հալածանքը հոովմայեցւոց բոլոր
իշխանութեան մէջ կը սաստկանար, ո-
րուն տակ ընկած էր փոքր Հայաստան
ալ . ասոր գլխաւոր քաղաքներն Աեսա-
րիա, Սելիտինէ և Սեբաստիա՝ հոով-
մայ և Ըլեքսանդրիոյ նախանձօրգբ էին
եկեղեցւոյ Սարտիրոսներ ընծայելու :
Ըրտաշէսի թուն լոսորով և իրեն որ-
դին Տրդատ, իբրև դաշնակիցք հոով-
մայեցւոց կը ջանային Այսերաց ան-
գթութեանը հաւասարելու : Ետքինն՝
որ իր տերութիւնը Գիոկղետիանոսի
օգնութեամբը ձեռք ձգած էր, անկէ
զրգուեալ իւր տերութեանը մէջ երկու
անգամ քրիստոնէից դէմ հալածանք
հանեց, և անձամբ իւր հրամանը կը կա-
տարէր, նահատակելով 36 հոովմայե-
ցի կամ յոյն կուսանք, որ իր ապարա-
կաց մէջ ապաստաններ էին, զայրանա-
լով չկարենալուն անոնցմէ մէկը, այս-
ինքն զգեղեցիկն հօրիսիմէ, ոչ տան-
ջանքով և ոչ բռնութեամբ իրեն հարս-
նացնելու : Ըստ վերջի անգութ գոր-
ծողութենէն ետքը յաստուածային ար-
դարութենէն պատժեալ, իր խղճէն և
կատաղութենէն տանջեալ՝ ձգեց իւր
հպատակները և գնաց գաղանաց հետ
խառնուեցաւ : Եւ ահա այսպիսի ա-
նարգութենէ մը հանեց զինքը Ըստու-
ծոյ ձեռքն՝ իր անուանը մեծագոյն փա-
ռացն համար :

Իր հալածանքը կրողներէն մէկն, որ 13 տարի կը տառապէր գբի մը մէջ բանտած, և դեռ Վախախնամութեան հրաշքով ինչուան այն ատեն կ'ապրէր, դուրս հանուեցաւ անկէ, որ Տրդատայ մարմինն ալ և հոգին ալ ողջացրնէ, և բոլոր երկիրը ճշմարիտ Բստուծոյ դարձրնէ: Եւ այս անձն էր մեծն Վրիգոր Պարթև, զոր երախտագէտն Հայաստան անուանեց Լուսաւորիչ, անուն արժանի ընդունողին և տուողին: Կը թողում Վախանգեղոսի ժամանակակից պատմիչ, և եկեղեցական պատմութեան զոյնատակ դարձին Հայոց 'ի քրիստոնէութիւն, որ կայծակի պէս շուտ մը Հայաստանի մէկ ծայրէն ինչուան մէկալը տարածուեցաւ, ուր 400 Եպիսկոպոսներ ձեռնադրեալք 'ի Լուսաւորչէ՝ սիռեցան հաւատոյ և օգտակար գիտութեց լոյսը ծաւալելու, հանդերձ բազմութեամբ վարդապետաց և քահանայից, զոր Լուսաւորիչն փոքր Հայոց քրիստոնէայ քաղաքներէն, մանաւանդ Սեբաստիայէն ու յԱսորոց բերեր ու հրահրեր էր:

Հայաստանի ամէն վիճակաց և աւանաց մէջ յունարէնի և ասորերէնի դպրոցներ բացուեցան. արքունականք իսկ իրենց վեհափառ Թագաւորին հետ մէկտեղ, և Բնահայ և Տրի հին պատօնեայքն՝ աշակերտեցան ճշմարիտ վարդապետութեան, և ազգային կոնցրումաց որդւոցմէ տասուերկուքն Լուսաւորչայ օգնական Եպիսկոպոսներ եղան: Լուսաւորիչ բաց 'ի բանիւ քարոզութիւններէն՝ թողուց նաև գրով ճառեր, աղօթքներ և պատարագամատոյց մը. իսկ իր առաջին քարոզաբանութիւնը, զոր Տրդատայ և ժողովրդեան մկրտութենէն առաջ խօսած էր, կ'ըսուի նաև Աշեղաբաբի սրբոյնի Գրիգորի, զոր Վախանգեղոս արքունի քարտուղարն հաւաքեց և կարգի դրաւ: Եւ այս երկու հեղինակներն, հանդերձ մատենագրօք Գ դարուն, յունարէն և ասորերէն կը գրէին: Հայոց եկեղեցւոյն պաշտօնեայքն գիտէին այս լեզուները, և իրենց հօտին կը թարգմանէին Ս. գիրքը:

Հայաստանի առ Վրիստոս դարձէն ետքը, մեր բարոյական պատմութեան մէջ զխաւոր դիպուածն է հայկական գրերուն գիւտն կամ կատարելագործութիւնն: Եւս գիւտը ազգին առաջին հմուտ վարդապետին՝ Սեբրովայ պահուած էր, որ կը ծաղկէր Գ դարուն վերջերը և էն սկիզբը՝ Ս. Խահակայ կաթողիկոսութեան ժամանակը, որ Լուսաւորչայ թողան թողն էր: Սեբրովայ այս կաթողիկոսին և Սուսանայ Թագաւորին օգնութեամբ՝ յաջողեցաւ Հայաստանի նոր պարծանք մը և անկորուսելի գանձ մը պարգևելու: Լուսաւորչայ աշխատասիրութիւնը պսակեցին Սեբրովայ, Խահակ և իրենց 60⁶ չափ աշակերտներն, որք երկայն ժամանակ յոյն, ասորի, պարսիկ, ևս և քաղղէացի և լատին լեզուաց հըմտացեալ, կէս դարու մէջ, Ս. գիրքը և գրեթէ ամենայն Ս. հարց գործքերը՝ ազգային ամենէն ընտիր լեզուով թարգմանեցին: Եւս թարգմանիչներն իրենց ուսմանց ընթացքը Վթէնքի, Վղէքսանդրիոյ, Եդեսիոյ, Կոստանդնուպոլսի, Հռովմայ և Բնտիոքայ դպրոցաց և գրատանց մէջ կատարելագործեր էին: Իրենց թարգմանած գրքերը ժամանակով և անկէց աւելի ձախորդ դէպքերով հնձուած և կորսուած, մասամբ միայն ձեռքերնիս հասան. և այն մասին մէջ ալ կը գտուին այնպիսի թարգմանութիւնք՝ որոնց յունարէն բնագիրը կորսուած է. ինչպէս են Եւսեբիոսի ժամանակագրութիւնը, Փիլոն Եբրայեցին, Սեւերիանոս Վաբալայ եպիսկոպոսին ճառերը, և այլն և այլն:

Սեր այս մատենագրական դարն ըսուեցաւ Ոսկի Դար, որ անշուշտ շատ աւելի պայծառ կ'ըլլար, եթէ քաղաքական խռովութիւնք չվրդովէին զտէրութիւնը: Հազիւ թէ մեր ընտրելագոյն թարգմանիչք իրենց պանծալի աւարոյն բեռնաւորեալ իրենց հայրենիքը մտան, իսկոյն Եւրազիոնեաց տէրութիւնը մարեցաւ իրենց աշխարհին մէջ, երկրորդ անգամ Սասանեանց ատելութեան զոհ ըլլալով:

Լյս կամակոր հարատու թիւնն , և իրեն յաջորդ Բսիոյ ուրիշ տիրապետութիւնքն հալածեցին մերժեցին ամէն լոյս , ամէն կրօնք որ իրենց կրօնից համաձայն չէր : Ընհաշտ և երկարատև պատերազմ բացուեցաւ Վրիստոնէութեան և դարութեանց դէմ , որ Հայաստանի ուրիշ աշխարհներէն աւելի վըտաբեր եղաւ՝ պատճառաւ իւր աշխարհագրական և բարոյական դրիցը :

Չորս Սիլերկրեայ ծովուց միջոց և գրեթէ հին կիսագունտին երեք մասերուն կենդրոնը , երկրիս ամենէն երջանիկ կլիմային տակ , (թէ և չունի քաղցր կլիմայի մը ամէն բարեբաստութիւնները՝ ծովուն երեսէն խիստ շատ բարձր ըլլալուն համար) Հայաստան ազգաց ճամբայ մը , խառնուրդ մը եղաւ միշտ Բսիոյ և Եւրոպիոյ . առաջինին առաջապահն երկրորդին վերջապահն : Լյս դիրքը որ շատ շահաւոր է վաճառականութեան և քաղաքականութեանկատմամբ , Հայոց աշխարհին տառապանաց և շարունակ արշաւանաց առիթ էր : Եթէ իւր քաղաքական օրինաց մէջ ալ կային թերութիւնք՝ որ արդէք կ'ըլլային իրեն աւելի ուժով ըլլալու և դրսէն եկած յարձակմունքը վանելու , պէտք է խոստովանիլ ալ որ շատ դժուար բան էր այնչափ բարբարոս և պատերազմող բանակաց և ազգաց անդու հոսանաց անդադար դէմ դնել : Երկրիս երեսն աշխարհ մը չկայ , որ այնչափ անգութ աշխարհակալներ , քաջ զօրագլուխներ , յարձակող բանակներ , և այնչափ արեանց հեղեղներ տեսած ըլլայ , ինչպէս Հայաստան , որ այնչափ օտարասեռ տարերօք , թշնամիներով և հակառակորդներով շրջապատեալ էր : Ընչպէս կարելի էր ընդ երկար այսչափ ահարկու հարուածներուն դիմանալ : Եւ սակայն դիմացաւ Հայաստան 3000 տարիէն աւելի հիւսիսային հրոսակաց և արևելեան ու հարաւային ազգաց յարձակմանց , աւելի շատ անգամ յաղթող՝ քան թէ յաղթեալ :

Բնաբեր ոգւովն վաճառական և երկրագործ , 'ի հարկաւորութենէ էր պա-

տերազմող՝ նիզակը և արօրը փոփոխակի կը գործածէր . մինչդեռ մէկ ձեռքով իր հայրենեաց վրայ յարձակողները կը վունտէր և կ'ընկճէր , միւսովը շատ մը երկիրներ ալ կը պաշտպանէր : Եթէ աւելի անաչառ ըլլային քննադատք հին պատմութեան , ոչ այնչափ պիտի զարմանային որ տասն յոյն տերութիւնք միացան մէկ Բսիոյ տերութիւն մը կործանելու , որչափ պիտի զարմանային՝ տեսնալով որ Հայաստան հաստատուն կեցած 'ի մէջ բարբարոս և քաղաքակիրթ ազգաց , կը բարձրացնէր իւր վահանը նաև այն գոռոզ Յունաց և արևմտեան պետութեանց վրայ : Երաւ Հայաստան ալ երբեմն օտար և երբեմն ազգային աշխարհակալներէն գրգռեալ Յունաստանի վրայ ալ յարձակեցաւ , բայց այս ալ ձմարիտ է , որ եթէ Հայաստան արևելից և հիւսիսոյ առաջին հարուածներուն չդիմանար , Յունաստան այնչափ դիւրութիւն պիտի չգտնար իր պարծելի մատենագրութեամբը ինքզինքնալ , զուրիշներն ալ զմայլեցնելու : Արպէս զի Յունաստան ըլլար այնպէս՝ ինչպէս որ եղաւ , պէտք էր որ Հայաստան ալ իր տեղն ըլլար : Բայց պէտք է ճանչնանք որ Յունաստան ալ մեզի անբաւ օժանդակութիւն ըրաւ . եթէ Հայաստան , որ աշխարհաւ , լեզուաւ և բարուք ազգ արևելեան , արևելեան ազգաց մէջ նշանաւոր եղաւ , Յունաստանի մօտ ըլլալովն էր : Լյս երկու ազգաց վերջին սահմանները՝ որ հիմա հազիւ թէ կը ճանչցուին , փոքր Բսիոյ գեղեցիկ գաւառներուն մէջ իրարու կը խառնուէին : Արօնքի , մատենագրութեան նաև քերականութեան մէջ , Հայաստան աւելի յունականի մօտ է քան թէ բուն ասիականի :

Երբ 'ի Վրիստոնէութիւն դարձաւ Հայաստան Տրդատայ ատեն , զօրաւոր և ընդարձակ էր , մինչդեռ Յունաստան հազիւ թէ ինքնակաց երկիր մը կը ճանչցուէր : Վրիստոնէն Հռովմայ կայսրն աթոռն 'ի Վիզանդիոն փոխադրեց և Յունաց նոր ինքնակալու-

Թեան հիմն դրաւ : Առտանդիանոս և Տրդատ Արկովիդիա Վիոկղետիանոսի արքունեաց մէջ իրարու բարեկամացեր էին : Արկովիդիա ալ գահ ելլալով՝ դաշնակիցք եղան , և հաւատալով ՚ի Քրիստոս՝ եղան եղբարք : Այս երկու վեհափառ գլխոց դաշնակցութիւնն իրենց յաջորդաց մէջ ալ քիչ շատ դարու մը չափ տեւեց , Պարսից և ուրիշ թշնամեաց դէմ իրարու օգնելով : Բայց երբ երկու արքունեաց մէջ ալ ախտք և զեղխութիւնք տիրեցին , իրարմէ բաժնուեցան և մէկզմէկ մատնեցին : Հայաստան , աւելի տկարագոյն և Պարսից ու Յունաց մէջն զետեղեալ ըլլալով , աւելի փնասուեցաւ . և քիչ ատենէն այն երկու ինքնակալութեանց մէջ երկու բաժնուեցաւ . Առտանդիանոսի տակն եղած մասն դեռ պաշտպանութիւն մը ունէր , բայց միւսն ցաւագին կը հեծէր Սասանեաց անհաշտ ատելութե տակ , որք կը ջանային զհայս զրազաշտական մոգութեան դարձնել : Այս մինչդեռ հայոց մէջէն տկար և ապականեալ նախարարներէն մէկ քանին որսացին՝ Ս . Վրոց մէկ մասն այրեցաւ , մէկ մասն ալ ծածուկ պահուեցաւ , մինչդեռ Արկովիդիք սկսան գոցուիլ և կրակի սեղաններ ասդիս անդին հաստատուիլ , և ահա 700 մոգ պարսիկ՝ Սեւրովպայ և Բասակայ աշակերտաց պիտի յաջորդէին , յանկարծ այս սուրբ կաթողիկոսին թոռն իշխանն Սամիկոնեանց Սարգան , առիւծու մունչուն մը հանեց , կրօնից ու հայրենեաց իրաւանց պաշտպան կանգնեցաւ : Առաքինութիւնն և քաջութիւնն պատասխանեցին անոր ձայնին , պատերազմ հրատարակեցաւ Պարսից դէմ : Բայց ո՞ր է բանակն որ կարող ըլլայ արքայից արքային բազմութիւ գնդից դէմ գնել : Հոն էր դեռ հայաստանի կէսն . հրաւեր տուաւ Արկովիդիա Քրիստոսեայ ազգաց , բայց անոնք մտիկ չըրին : Վարձաւ իր նախկին դաշնակցին , և սուրհանգակ սուրհանգակի ետե խաւրեցին օգնութիւն խնդրելու ՚ի Բիւզանդիոյ . բայց Բիւզանդիոն խուլ և լուռ կեցաւ

Հայաստանի վերջին ահաւոր ժամուն : Այն ատեն հայաստան ինքն իրեն մնացեալ յետ երկայն դիմադրութեան ընդդէմ քառապատիկ աւելի զօրութեան , ընկճեցաւ փառօք , իրեն քաջացր անունը բարձրացնելով ՚ի Թիւ Սարտիրոսաց : Արեսուն տարիէն աւելի դեռ պատերազմը և խռովութիւնը շարունակեց , ինչուան որ Պարսկաստան ճանչնալով թէ անօգուտ են իր հալածանքն , ետ կեցաւ և հանդարտ թողուց ըզհայաստան :

Բայց եթէ կրօնքն հալածանօք աւելի հաստատուեցաւ ՚ի հայաստան , մատենագրութիւնն շատ փնաս կրեց . իրաւ , ոչ միայն հոգեւորական օգուտ բերաւ Պարսից և մոգուց հակառակութիւնն , այլ և մեր շատ վարդապետաց հանձարները վառեց , որոնցմէ գլխաւորքն են երեք ընտիր հեղինակք՝ Ազնիկ , Աղիշէ և Վազար փարպեցին . բայց թարգմանչաց հրեղէն գրիչներն դադրեցան , և ոսկեղէն դարն , չորս երկարատե դարուց միջոց թանձր խաւրով ծածկեցաւ , մինչդեռ ուրիշ իշխանութիւն և ուրիշ կրօնք մը կը խռովէին մեր աշխարհը և ուրիշ շատ երկիրներ : Եր հայկական հարստութեամբ , որ ելան ԹԴ և ԺԱԴ դարուց միջոց , ազգային մատենագրութիւնն ալ սկսաւ բարձրանալ , թողլով մեզի տասնի չափ պատմիչներէ զատ , սրբազան բանաստեղծ մ՝ ալ՝ որ լեզուիս ամենէն իսկատիպ հեղինակն է , Ս . Գրիգոր Նարեկացիին :

Սակայն հայաստանի քաղաքական հորիզոնն նորէն տխուր և թանձր ամպերով կը ծածկուէր , առջինէն աւելի ահաւոր արշաւանքներ կը սպառնային , և մօտալուտ կ'երևնար ընդհանուր կործանումն մը : Այսիոյ անապատներէն վրանաբնակ ժողովուրդ մը կու գար , սերունդ Սկիւթացուց , ազգ անթիւ աղեղնաւորաց , որոնց ձիոց ոտից տակ ընդարձակ երկիրս կը գողար , և որոնց նետերն արևուն վրայ շարժական գիշեր մը կը քալցնէին : Այսոնք Տուրքիայ , Ալփ-Ալանայ և Ղինկիզ Վա-

նի որդւոցը առաջնորդութեամբ՝ իրենց հարցը չկրցածները՝ ի գործ դրին : Սրիշ անգամուան պէս իրենց առաջին հեղեղներն ողողեցին զհայաստան՝ և հայաստան չէր այն ինչ որ էր երբեմն : Սերջին անգամ մ' ալ իրեն դէմ լաւուած աղեղան հակառակ շողացուց նիզակը , բայց բարբարոսաց դէզադէզ ալիքն զինքը մինչև իւր սահմանէն ալ դուրս հանեցին : Սէկ կողմանէ ալ , աւշուանքը սպառնացող մարգարէական աւանդութիւն մը , ամենայն սրտերը կը ստեղծէր . չէ թէ միայն անկարելի կը սեպէին ընդդիմակալութե ճիգը , այլ դրեթէ և յանցանք : Եւ ահա այն ատեն հայաստան անկարծելի ճամբայ մը բռնելու ստիպուեցաւ . չկարենալով ոչ յաղթութեամբ դէմ կենալ , և ոչ ալ ուզելով անխնայ ջարդուիլ , նոր ճամբայ մը բացաւ ուրիշ ազգաց մէջէն , և ամէն դի խաւրեց գաղթականներ՝ միտքերնին լցած յիշատակօք իրենց հայրենեացը , զոր կը թողուին յաւիտենական ցաւօք և կարօտով :

Սև ծովուն եզերքներն անհուն եւ ռանկեամբ մը պատելով՝ հայ գաղթականութեան գաղափար մը կ'ունենանք . եռանկեան մէկ կողմն դէպ'ի աւրեմուտք՝ կ'երթայ ի փոքր Ասիա , (Թրակիա և Սակեդոնիա մինչև ի Վանութեան գաւառները , մէկալ կողմանէ կովկասը և Ռուսաց աշխարհները անցնելով՝ կը հասնի ի Եհաստան , ուսկից երրորդ կողմն ալ կ'իջնայ՝ կալիցիայէ և կարիայէ անցնելով մինչև Վանութեայ բերանները : Սրջափ տարբեր էին այս գաղթականներն անոնցմէ , որք իրենց հայրենիքը կը գրաւէին . մինչդեռ ասոնք՝ կործանումն և աւերումն կը բերէին , մերիններն օգնութիւն տէրութեանց որ զիրենք հիւրընկալեցին , չէ թէ միայն իրենց բուն հայրենեաց մէջ կրած փնասուց փոխանակեցին , այլ և իրենց նոր հայրենեացն այլ և այլ կերպով օգտակար եղան արուեստներով , վաճառականութեամբ և նոյն իսկ մատենագրութեամբ ալ :

Եւս խաղաղասէր գաղթականներէն

զատ ուրիշ գաղթականութիւն մ' ալ եղաւ . պատերազմող քանի մը իշխանազուն և զինուորական ընտանիք՝ իրենց դաշնակցօքն , նեղեալ Սելջուկեանցմէ և զգուեալ ի Յունաց , փոքր Ասիոյ մէջ նետուեցան , հաւրօսի ամենէն ամառայ լեռնակողմերը՝ որ ի կապ պաղովկիա , ի Վամփիւլիա և ի կիւլիկիա . որոնց տիրեցին և նուաճեցին , աւելի բռնութիւն , քան թէ դաշնաւորութեամբ : Եւս կերպով կանգնեցաւ ահա հայոց վերջի հարստութիւնն Ռուբենեանց , որ Եւրոպացուց ամենէն ծանօթն է , մանաւանդ Խաչակրաց օգնական ըլլալովն . որոնցմէ ինքն ալ փոխարէն ընդունեցաւ թագաւորական պսակը և ազատական օրէնքներ : Սեր կիւլիկիոյ թագաւորներն վաճառականութեան և առուտուրի շատ դաշնադրութիւններ ըրած են Վաղղիոյ , Սպանիոյ և Իտալիոյ հասարակապետութեց՝ ծովեզերաց ճարտար քաղաքաց հետ : կարոսի Ռուսինեան թագաւորական ցեղին հետ ինամութիւն ըրին , ուսկից եղաւ հայոց վերջի թագակիրն Էւոնե (2) , որ իր տէրութիւնը կորսնցընելէն ետքը եկաւ կարողոս Զին արքունիքը , վերջապէս Փռանկաց թագաւորաց հետ Ս . Վիոնեսեայ գետնափոր կամարաց տակը ննջելու :

Ինչպէս իրենց նախնիքն Յունաց լեզուին և արքունեաց կը հետևէին , Ռուբենեանք ալ Փռանկաց լեզուն և արքունիքը օրինակ առին իրենց . գրեթէ ամենայն պաշտօններու և Սոյ թագաւորին պաշտօնէից պատուանուանքն փռանկերէն էին . օտար տէրութեանց հետ ըրած բոլոր դաշնադրութիւններն կամ փռանկերէն և կամ լատիներէն գրուած էին . Վաղղիոյ և հայոց թագաւորներն զիրար հօրեղբորորդի կ'անուանէին . և ժամանակակից հայ աշխարհագրաց մէկն զՎարիզ կ'անուանէ Հաւնախարան վարդապետաց :

Ռուբենեանց ծաղկած ժամանակը մեր մատենագրութեան արծաթէ դարն էր , ուսկից մեր ձեռքը հասած են 20 պատմագիրներէն զատ , մեր ամենէն

ընտիր քերականք, մեկնիչք և սրբազան բանաստեղծք: Այս ուսումնական մշակութիւնն ժԳ դարէն ասդին չանցաւ . և ժԳ դարն ուրիշ երկու աւելի խեղճ դարերով՝ բոլորովին անկման տխուր նշանը տուաւ: Առաջինէն լեզուն որ քանի մը Սիւնեաց վիճակաց մէջ մտած էր, կրօնական տեսութեամբ քանի մը օգուտ և քանի մը վնասէն զատ, հայկական լեզուն զտութիւնը աղաւաղեց . և այս ապականութիւնը երկայն դարեր տւեց, չէ թէ միայն բուն հայաստանի մէջ, այլ և ՚ի գաղթականս, և մանաւանդ Իտալիոյ վանքերուն մէջ, զորս Ունիքոք, այսինքն հայ Ղովմնիկեանք և Բարսեղեան միանձուք հիմնեցին Իտալիոյ շատ քաղաքաց մէջ . որոնցմէ և ոչ մէկը ժե դարը չանցաւ:

ԺԶ դարուն վերջերը, մինչդեռ հելակունեանց, Անկ (Ի)իմուրաց, Սպիտակ և Սեալ Սխարի ըսուած տոհմից, ու Շահ-Սէֆեաց և իրենց հակառակորդաց ձեռքով բացուած հայաստանի վերջերը դեռ չէին բժշկուած, հեռաւոր հորիզոնի վերայ վերանորոգութեան լոյս մը սկսեր էր ծագիլ:

Հայաստան որ միշտ քաղաքականութեան մէջ արեւելից կարապետն էր, նոր ժամանակաց ամենէն նշանաւոր գիւտն ալ ընդուներ էր, այսինքն Տպագրութեան արուեստը: Բսկէ երեք դար առաջ քանի մը հայք բնածին սիրով մը բարւոյն և գեղեցկին՝ անխոնջ աշխատանօք հաստատեցին հռովմայ և Սեւեոկի մէջ տպագրատուններ . Բարիզու հայ տպագրութիւնն ալ ասկէ 230 տարի առաջ եղած է: Շատ մը հոգեւոր և օգտակար գրքեր տպագրեցան այն տեղուանքն . բայց կանոնաւոր յառաջադիմութիւն չունեցան: Այս բարեմասնութիւնս պահուած էր կրօնից և գիտութեանց զարգացման նուիրեալ միաբանութեան մը, որ նոյնպէս հաստատուեցաւ Իտալիա, և յայն Սենտիկն, որ հայոց հետ առաջին վաճառականութեան դաշնակցութիւնը հաստատած էր ժԳ դարուն սկիզբը: Ամէն

գիտնոց ծանօթ է Ս . Ս ազարու կղզին և Ս անքը, զոր անցեալ դարուն սկիզբը հիմնեց Սիսիթար Սարգապետն, փոքր հայոց Սեբաստիոյ քաղաքէն ընծայուած, ուսկից մեր Սուսաւորիչն իր առաջին աշակերտները ժողված էր:

Ղողովիկոսի ժԳ դարուն բուն հայաստանի մէջ ալ յառաջադիմութեան շարժմունք մը սկսաւ երևալ: Առաջին քարոզիչներէն զատ, քանի մը ազգային վարդապետք և միանձուք, վանական օրէնքներ, աստուածաբանական և փիլիսոփայական գիտութիւններ կարգաւորեցին . կոստանդնուպոլսի տպարանը սրբազան գրոց հետ մեր նախնեաց մատենագրութեան մէկ քանին ընծայեց ժողովրդեան . բայց այս ամէնն ալ շարունակութիւն և մեծ հետեւանք մը չունեցան . իսկ Սիսիթարայ հաստատած միաբանութիւնն երթալով աւելի կարող կ'ըլլար հայկական մատենագրութիւնը ծաղկեցնելու:

Իմ վիճակս կը ստիպէ զիս հոս քննադատութիւնը թողու ուրիշներու: (Ի)ողլով ուրեմն առ ժամանակ մի, իմ մանկութեանս քաղցր ապաստանարանը, իմ հոգւոյս և մտացս հայրենիքը, կը փութամ դառնալու ՚ի Սեծն հայաստան վերջին անգամ մ'ալ, գտնալու զայն որ ճառիս զխաւոր նպատակն պիտի ըլլայ:

Ժե դարուն սկիզբը, երբ բաղզն կը բաժնէր զհայաստան (ս)մանեան և Պարսից տէրութեանց մէջ, մեծն և խորագետ Շահ Ապպաս, լաւ ճանչնալով իւր հակառակորդին ուժը և գուշակելով հայաստանի այնչափ անգամ արիւնոռօգ և դեռ բարեբեր դաշտաց կորուստը, մտածեց այնպիսի քաղաքագիտական հնարք մը որ մեր ատեններս ալ գործադրուեցաւ . երկիրը ձեռքէն կորսնցնելով՝ ուզեց բնակիչները պահել: Այս ժամանակներս Արասիոյ եզերաց վրայ, ուր երբեմն հայաստանի հին թագաւորանիստ քաղաքները կանգնած էին, կը ծաղկէր աւանն հինջուղա, հայաստանի ամենէն վաճառաշատ տեղն՝ Պարսկային ծոցին, Պոնտոսի և կովկասայ մէջտեղերէն անցած

կարաւաններուն մեծ ճամբուն վերայ յարմար դիրք մը ունենալուն պատճառաւ : Այստեղ այնքան գաղթականաց Շահ-Վապաս Սուղայի բնակիչքն ալ ստիպեց գաղթիլ յԱպաստան իւր մայրաքաղաքը, որուն դիմացը Վոր-Սուղայ աւանը շինեցին, որ քիչ ատենէն իր շէնքերովը և Հնդկաստանի հետ առևտրի երթևեկութեամբ, և մեծին Վապասայ պաշտպանութեամբ հարստանալով գերազանցեց շին-Սուղան : Բայց այս Շահին թողան իշխանութեանը ժամանակ, մոռցուեցան Հայոց թէ՛ գաղթելու ատեն կրած փնասն, և թէ իրենց ծառայութիւնները որ Շահին մատուցին . և երկրորդ անգամ զրկուելով իրենց ստացուածքէն և ազատութենէն՝ ընկան թշուառութեանց մէջ : Իրենցմէ ոմանք սկսան Հնդկաստանի հարուստ նաւահանգիստները և քաղաքները պանդխտիլ . ոմանք ալ փախան շին-Սուղայի իրենց խանձարրոցը հետքը գտնելու, զոր Վապաս հրամայեց էր աւերել և փլցնել : Բայ փախստեայ դարձողներէն էր որդին Վազամալայ, որ գլուխ և առաջնորդ էր եղած գաղթականին : Բայ որ ալ թողան որդին Վարտիլ Սարում Վազամալ, ճրնեալ 'ի Շողութ՝ Սուղայի մօտերը, Հնդկաստանի մէջ վաճառականութիւն հարստացաւ, և եկաւ Սեբաստիոյ սահմաններուն մօտ Երզնկի քաղաքը բնակեցաւ, ուր և ծնաւ 1760ին Սամուէլ Սուրատ, վարժարանիս հիմնադիրն :

Ղոխութեան մէջ ծնած՝ քիչ ատենէն յետին աղքատութեան մէջ ինկաւ սա, որով սորվեցաւ իւր աշխատանքը հարստանալ . վասն զի դժբաղդութիւն հայրն ստիպուեցաւ ընտանեացն հետ ձգելու զԵրզնկի և երթալ Երուսիոյ Տաճկաստանը . հասնելով 'ի Վարտին՝ հանդիպեցաւ Սխիթարեան վարդապետի մը, և իւր որդիքը նախ անոր դաստիարակութեանը յանձնեց, վերջէն անկէց յանձնարարութեան գիր առած եկաւ 'ի Վենետիկ իր զաւակներովն, Սխիթարայ գործը աւելի մօտէն տեսնելու : Բայ եղաւ Սամուէլի Սու-

րատայ Սխիթարեանց հետ վերաբերութեան և բարեկամութեան պատճառն՝ զոր ուրիշ դէպքեր ալ աւելի հաստատեցին : Չորս ամիս Վենետիկ կենարէն ետև՝ Սուրատ հօրը հետ պանդխտութիւնը շարունակեց և Սալիադի մէջ հայրը կորսնցուց մահուամբ . անկէ Հնդկաց Սատրաս քաղաքը նաւարկելով, հոն ազգային վաճառականաց քով մտաւ : Բայնց մէջ անուանի էր Երզնկայի Սափայէլ Վարամեան, որուն նաև փեսայացաւ, դարձեալ բարի վկայութեամբ Սխիթարեան հօր մը, որ Սափայէլի քովը կը բնակէր իբր դաստիարակ իւր որդոցը :

Սափայէլ այս վարդապետին աշխատանաց և քաշած նեղութեանց փոխարէն՝ խոստացեր էր գումար մը ստակ ձգելու դպրոցի մը հիմնադրութեան համար : Փեսայն Սամուէլ Սուրատ առաջադրեց որ եթէ բախան յաջողի՝ ինքն ալ նոյն վախճանին համար աւելի մեծ գումար մը նուիրէ : Բայն սիրտ և հաւատարիմ խոստացող էր . Սափայն ամուսնուեցաւ Ստուծոյ օրհնեց անոր ճարտարամտութիւնը և հարստացաւ, ու Վենետիկ ըրած ճանապարհորդութեան ժամանակէն 'ի վեր միտքը դրածը կատարեց, մեռնելէն տարի մ' առաջ 1815ին գրած կտակաւ, Սխիթարեանց առաջնորդութեանը տակ ազգային որբոց և աղքատ մանկանց համար Երուսիոյ մէջ հաստատելու վարժարան մը, և հարկաւոր եղած դրամագլուխը սահմանեց :

Երբ չեմ երկնցընէր կտակին կատարմանը և վարժարանին հաստատութեանը վրայ, նախ՝ հիմնադրին մեռնելէն 18 տարի ետև յամին 1834 'ի Ռատուա, և յետոյ յամի 1846 'ի Ռարիզ : Երբ շատ մը դիպուածներ, չեմ կրնար մոռնալ որ և է անձանց այս գործողութեանց մէջ ունեցած արդիւնքն, և կը փափագիմ որ այսպիսի յիշատակը և միայն այսպիսիներ մեր սրտից մէջ տպաւորին :

Բայնց կը թողում դարձեալ այս վարժարանիս և ասկէ երկու տարի ետքը

Հիմնուած Վենետիոյ Ռափայելեան վարժարանին ընթացից քննութիւնն ալ : Բայց կ'ուզեմ անցողաբար քանի մը խորհրդածութիւն ընել այն ընդդիմադրութեց, հարցմանց, քննադատութեց և խրատուց՝ որ երբեմն մեզի կ'ըլլան : Եւ նախ կը յիշեցընեմ այն ծանօթ և շատ անգամ մոռցուած առածը, թէ՛ Ռնկարելի է հակառակ կամքերը միաբանել : Երկրորդ, թէ մեր վարժարանաց Տիմադրութիւնը 25 տարիէն աւելի չըլլալով, չէին կրնար մեծ բարգաւաճանք մը ունենալ, մանաւանդ վարժարանաց զանազան շահուց դպրոց դիպուածոց նկատմամբ, յիշելով ալ որ այս վարժարանքս հեռի ըլլալով ՚ի կենդրոնէ ազգին, անանկ ազգի մը որ շատ կերպով իր մէջ բաժանեալ և օտար տէրութեանց տակն է, տեսակ տեսակ դժուարութիւններ ալ կը կրեն : Եւ որովհետև այն տէրութեանց սահմաններէն ալ դուրս են, օտար տէրութեց հետ ալ երախտագիտութեան պարտքեր ունին, զորոնք չենք կրնար լուել :

Վախ բարձրագոյն Վրան կառավարութեանը կը վերաբերինք, որուն իշխանութեան մէջն է ազգերնուս մեծագոյն մասն . այդ պատճառաւ իրաւացի է մեր վարժարանաց աշակերտները մեծագոյն մասամբ անոր հպատակներէն ընտրել, դաստիարակել, և ջանալ որ թէ իրենց հայրենեացն և թէ տէրութեան պիտանի մարդիկ ըլլան :

Սեր վարժարանք Վրիտանիոյ և Ռուստրիոյ տէրութեանց ալ պարտականք են . առաջնոյն, վասն զի մեր հիմնադիրքն Ռնգղիացոց հպատակ էին, և անոնց տէրութիւն այս կտակները պաշտպանեց և կատարել տուաւ . նաև ապահովուց Ռափայելեան վարժարանին դրամագլուխն իւր գանձուց մէջ : Իսկ երկրորդին, որ Վենետիոյ իշխանութեան յաջորդելով՝ կը շարունակէ մեր Սիւրբանութեան այն հիւրասիրութիւնը զոր Սուայի և Վենետիոյ մէջ ստացած էր սա : Ռուստրիոյ կալուածոց մէջ հաստատուեցան մեր երկու վարժարանքս ալ, որոնցմէ մէկը դեռ կը ծաղ-

կի հոն, իսկ միւսն իւր եկամուտը անկէ կը հանէ : Բայց Սուրատեան վարժարանն ամենէն աւելի Վաղղիոյ տէրութեան անուշ պարտաւորութիւն մը ունի . իր աշակերտները, որդիք նախկին դաշնակցաց, ուրիշ բան չեն փնտուր հոս, բայց իմաստուն և խոհեմ դաշնակցութիւն մը յառաջագիմութեան ՚ի գիտութիւնս՝ ընդ պաշտպանութեամբ առատամիտ պաշտօնէից և քաջ վարժապետաց, որոնց մեր ջերմ երախտագիտութիւնը կը յայտնենք :

Եւս մտածութիւններս և զգացմունքներս վերջապէս զիս կը բերեն հրատարակելու ջերմաջերմ երախտագիտութիւն և օրհնութիւն, որոց արժանի է քու անմոռաց անունդ և փառաւորեալ հոգիդ, ո՛վ Սամուէլ Սուրատ, աղբիւր այսչափ յիշատակաց, ակնկալութեանց և արդեանց . յիշատակք, ակնկալութիւնք և արդիւնք, որոնցմով կ'ուզէի հիւսել և ձեացընել իբրև անթառամ ծաղկօք, ձիթենեօք և դափնեօք պսակ մը քու հարիւրամեակաշատակարանդ պսակելու . բայց քեզ անկար պաշտօնեայ քու սրբազան կամացդ, և աւելի սրբազան պարտուց, յանուն այս երկուց կտակաց չեմ դանդաղիր վկայելու այս պատուական ակրմբիս առջև, որ քու սրտիդ, հայրենեաց և Վրոնից բաղձանքը կը կատարուին այս քու առատաձեռնութեանդ տանը մէջ : Բայ ՚ի այս յիսնաթիւ աշակերտներէն, 150 զաւակներ ալ ունիս, որք իրենց դաստիարակութիւնը հոս կատարելով դարձան իրենց հայրենեացը գիրկը, և իրենց մտերիմ Ռափայելեան սանից հետ կը հրատարակեն և կը փառաբանեն ձեր պատկառելի անունները Ռսիոյ և Եւրոպիոյ այլ և այլ քաղաքաց մէջ, ուսկից ձեր բարիքը վայելելու եկեր էին : Եւ տեսնես դու մահկանացուի աչուրներէն աւելի պայծառ, ինչ յառաջագիմութիւն որ քու և քու գործակցացդ արդիւնքն կ'ազգեն հայոց ազգին մտաց, զոր այնչափ սիրեցիր : Ե՛հա մեր հայրենիքն աւելի քան զաւելի կը ճանչնայ ու կը յարգէ բարոյական և ուսումնա-

կան կրթութիւնը, կ'արթնցնէ Վաւթի և Պրոյերեսիոսի հանձարները, որ Լեւոնի սրահներուն մէջ իրենց ժամանակին ամենայն ճարտասանները գերազանցեցին, և իբրև վարպետք բանասացութեան արձաններ ընդունեցան ի հռոմէական։ — նորէն կը հաստատէ թէ օտար լեզուաց ուսումն իրեն համար դիւրին ստացուած մ'է, որով կը հրաւիրուի պաշտօնարանաց, Վեսպանատանց և վաճառականութեան տանց մէջ։ — մինչդեռ միւս կողմանէ կը մըշակէ իր ազգային հարուստ լեզուն որ թարգման է իր երիտասարդացեալ սրբաին և ըղձիցը։ — օտար ազգի պատանեաց հետ վրձին և գրիչ կը բանեցնէ, և շատ անգամ անոնց հետ կը մրցի փառօք ըստ վկայութեան նոյն իսկ վարժապետաց և անկողմնասէր քննադատից։

Եր տեսնես դու քու որդեգրեալ զակրներէդ ոմանք, որ իրենք ալ մանկավարժ կամ ուսուցիչ եղած առանձին տուններու կամ հասարակաց դպրատանց մէջ առաջի մանկութեան և չսփահասից և ընտիր հասարակութեան մը իրենց հանձարը կը փորձեն, մէկն պերճաբան ճառերով, մէկալն թատերգական քերդուածներով և միւսն ալ զգայուն և գեղեցիկ բանաստեղծութեամբ, որք աւելի զարգացեալ քաղաքականութե մէջ կրնային աւելի պայծառ յաջողութիւն գտնել։

Դու կը տեսնես զայլ յառաջացեալ քաղաքական կամ զինուորական դասակարգութեանց մէջ, պատուաւոր անուամբք մեծարեալ, և քաղաքական պաշտօններ կատարելով, և շքանշաններ կրելով։

Եր տեսնես աւելի հաճութեամբ ծընողքներ, որք իրենց տնտեսական վիճակին մէջ տառապեալ և շփոթեալ կը հառաչեն իրենց սիրասուն զաւակացը դարձին, յուսալով գտնել անոնցմէ իրենց տուած աշխատանաց փոխարէնը։ Ըրդէն այս ծերերէն ոմանք իրենց կենաց վերջի ճառագայթները իրենց թուանցը լուսաւոր արշալուսին հետ խառ-

նելով՝ աւելի կատարեալ կը գտնան զանոնք, քան անոնց հայրերը երբ անոնց տարիքն ունէին։ — և այն հայրերն, որ կը խոստովանին իրենց յաջորդացը մտաւորական հասունութիւնը, որ իրենց ծերութեան ամուր գաւազան պիտի ըլլան։ — և մայրեր, որք առաջ մեծ խնայութեան մը ստիպուած էին, հիմա իրենց երախտագէտ որդւոցը ճարպիկութեամբ, բարեբաղդ դիւրութիւն մը կը վայելեն։ — օրիորդներ, որք աւելի գեղեցիկ և նազելի կ'երևան այն զարդարանքներով՝ զոր ստացան ոչ օտար ձեռքերէ, այլ եղբօր մը երկայն համբերութեամբ՝ զոր ուսան այն դաստանց մէջ, զոր դու բացիր բոլոր տան մը երջանկութեան համար։

Եր տեսնես դու աւելի խանդաղատանօք, որ եթէ քու սանիցդ մէկն կարօտութեան կամ ճախորդութեան մէջ ընկնայ, քու և քու գործակիցիդ անուամբ հաստատեալ ընկերութիւն մը կայ Մոռաւո-Ռախայելեան, որ կը մատուցանէ անոր օգնութիւն, խրախոյս և խրատ։

Դու, հայր որբոց Սուրատ, դու կը տեսնես դեռ թիւ որ մեր տկար աչուրներն կը ցուցնեն իբր հազիւ նորընծայ յուսոյ մը կերպարանաւ անհաստատ պագայի մը երեսաց վրայ ծածանեալ։ Կը տեսնես դու շրջադուստ մը երջանկութեան որ ճամբայ կը բանայ այդ ասպագային մէջ, ինչպէս գիշերուան լուսաւորն իր եթերական ընթացից մէջ, որուն միայն ոսկեգոյն մահիկը կը տեսնենք մենք, մինչ դու անոր բովանդակ պայծառ շրջապատն ալ կը տեսնես։ այսինքն է քու գործոյդ լուսմը, որուն մենք միայն երջանիկ սկիզբը կը նկատենք։ Եւ երբ մեր յաջորդներն գան ատենին քու սրտահար մահուանդ, կամ քու վարժարանիդ բացման հարիւրմեակ հանդէսը կատարելու, ո՞վ գիտէ թէ որչափ յառաջադիմութիւն, որչափ յաջողութիւն ստացած պիտի ըլլայ մեր հայրենիքն քու օրհնեալ գործոյդ շնորհօքն։

Եր կը լուենք հոս բայց դու այս ա-

մէն բանը կը տեսնես , և անմահ աչք մը
ձգելով քու գեղեցիկ մտածութեանդ
ամէն ներկայ և ապագայ արգասեաց
վրայ , կը դարձնես զայն դէպ 'ի յաղ-
բիւրնքու ազնուական սրտիդ , և կ'ըսես

զմայլմամբ . “ Տէր , տուրք ձեռաց քոց
են այսօրիկ ” . իսկ մենք կ'աւելցրնենք ,
թէ “ Եւ գործք արդեանց ՍԱՄՈՒԵ-
ԼԻ ՄՈՒՐԱՏԱՅ ” :

Առ Մարիս :

Քեզ ողջոյն , Սասիք , համբոյր ի սուրբ ճակատդ պաշտելի ,
Ի հայրենեան օծեալ սիրոյ Հայոց ծընողդ , Հայոց Ոգի .
Սպիտակախառ ալեացդ ողջոյն՝ յարփին պատշէկ մեծարելում .
Զէ իմ լեզու այլաշուրթն , ըզքեզ ի քոյդ կարդամ անուն :

Ըջոյն ամենակալ յայտ նըշանակ մեծութեան ,
Գլտանել առանց Սասեաց իցէ հընար ըզՀայաստան .
Եւ պաղպաղուն կերպարանացդ յականողիս իմ պարզուած
հըրձուանաց զոյգ վերբերէ ո՛հ թաղծութիւն յիս տըխրամած :

Յաւիտենիս դու այսմ աւանդ հին պարծանաց հալածական ,
Եւ փառաց անցելոյ նըշուլազարդ կանգուն յուրան .
Եւ փարազանց թորդոմայ լոկ դու նըշխար դիւցազն անմեռ ,
Եւ իջեալ դարուց քեւ , երկնաձե՛մդ , աճիւնք տապին յուզեալք յերեր :

Ընուն սիրոյ , լայն ճանապարհ օրհնից երբեմն Ընմահին ,
Պահապան հովանիդ վեհից մեր ցան յոսկերս ոսին՝
Սաստէ մուացութեան գնալ կորընչել յոյժ տարագիր .
Հիմ գերեզման եւեթ իցէ առաքինեաց հայ երկիր :

Հայիմ ի դա , համր ի խօսից աւերակացն հասակք գայունն՝
Ըղիտիցն ընտանութեամբ ընդեք ի խայթ ցաւոց դժխեմ .
Ո՛ր իմ գաւառ հայրենի , տուք ինձ ըզպերձն՝ իմըս բաժին .
Ընըգաստ յաշխարհ ի տար միթէ չըւեաց եղկելին :

Բընակ երկնից եւ երկրիս , ո՛վ արտեւան պանծալի ,
Կապել մաղթեա պատուէր սաստիկ կըրկին ջահիցն արփենի
Ընն ածել յոճիր յաւոց՝ մի շատ աչօքրն լուսաձոյլ
Կալ ի զընին մեր ամայց . պատանք նոցուն ըմբոն՝ սեաւ թոյր :

Ո՛վ դիտակ ամսածրար , յորդեսէր գութըս պատարուն ,
Ո՛ գիտէ իբր ի ներքին ալս իրանացդ անխօսուն
Գորովական աղիքդ ի գղորդ դառնակըսկիծ գեղանին ,
Հայաստանեայց զի աղունք քեւ չափ յառնեն ի վեր յերկին :